

ինձի ծառայող ամէն անձինքը . որոնցմէ չտար իրենց թոշակէն զատ ուրիշ բան մը չունէին , անանկ որ եթէ ան պակսելու ըլլայ , խեղճութեան մէջ պիտի խնան . աս անձանց մէջ կան նաև ծերեր , կանայք , տղայք , որ ուտելու հաց ալ չունին :

Գրեալ յԱշտարակի Տաճարին .

20 յունուար 1793 :

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ

Կարա թագաւորին նամակն առաւ , և տպահովցուց զինքը որ ժողովքին կը տանէր մէկէն : Երբոր դուրս ելլելու վրայ էին , թագաւորը նորէն ձեռքը ծոցը խոթեց , ու գրապանակը հանելով՝ ըսաւ . « Պարոն , թէ որ ժողովքը իմ ուզած անձս ինձի չնորհէ , ահաւս սիկ իր կեցած տեղւոյն հասցեն » : Եւ ըսելով՝ տուաւ զայն քովի պահապաններէն մէկուն . հասցեն , զոր ինքը իր ձեռքովը գրած չէր , ասանկ էր . Ա . Պ . ԷճՋօրաք Բը Ֆիբրէնդ . Ռի- Բը Պաֆ , Լի- 483 : Թագաւորը ետև քաջուցաւ , և պաշտօնեայն ալ իր ընկերներովը գնաց :

Կը շարունակուի :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Մոնդէ Պիանգոյ կամ Սպիտակ Լեռ :

Եւրոպայի մէջ բնութեան ճարտարապետած ահաւոր ու սկայածև հրաշալիքներէն գլխաւորն է Խաւրիոյ Սոնդէ Պիանգոյ կամ Սպիտակ Լեռ , որուն գագաթը 'ի բոլոր Եւրոպա բարձրագոյնն է , և որուն քով ուրիշ լեռները բլուր կ'երևան : Եւ հսկային հասակը 14,806 ոտք բարձրութիւն ունի ծովուն երեսէն , և 68 փարսախ հեռուէն աչքի կը տեսնուի . Գօսինեի գաւառին մէջ կ'իյնայ , Օուիցերիոյ ու Սաւոյայ սահմաններուն վրայ , ընդ մէջ Լ'նդրեւ և Ըամունի դաշտերուն : Եւսյետին դաշտը , որ 5 փարսախ երկայն է ու հազիւ կէս փարսախ լայն , և ծովուն երեսէն 3,174 ոտք բարձր , ինչուան

անցեալ դարուն մէջտեղուանքը անծանօթ մնացած էր . Բողօք և Ուինտահամ ճանապարհորդները գտան զասիկայ , ու անկէ ետքը՝ լեռը տեսնելու գացողները ասկից կ'անցնին : 1,600 բնակիչ կ'ապրին հոնտեղ՝ հետաքնին ճանապարհորդաց դադարելովը , և համեղ մեղր մը ծախելով , որ զարմանալի բան մըն է այնպիսի սառնապատ ու բքաբեր տեղեաց մէջ :

Սառնամանեաց դաշտի մէջէն կ'երկրնայ դէպ 'ի վեր Սոնդէ Պիանգոյ ու իր գլուխը ամպերուն կը հասցընէ : Եւս սառուցեալ կատարները քսանի մը չափ կան , որոնցմէ ոմանք 5 կամ 6 փարսախ երկայն են և կ'իջնան դաշտաբազեղ ու զուարթատեսիլ ձորերու ինչուան խորերը , և զովութիւն կու տան անոնց : Եւս հեռաւոր նշաններն են Սպիտակ Լեռան , որ այլ և այլ նկարակերտ ու իրարու հակառակ հաճոյական տեսարաններ կրներկայացընէ մարդու աչքին առջև , ըստ զանազան կողմանց որ դիտուի : Հիւսիսային կողմէն նայելով՝ բուրգի մը պէս կ'ամբառնայ , որուն վեհութիւնը աննման է : Հարաւային արևմտեան ու հիւսիսային արևմտեան կողմերէն՝ ստորոտէն ինչուան գլուխը կարգ կարգ բոլորածև գագաթներով կը բարձրանայ : Եւս հակառակն՝ իր հարաւային երեսը , որն որ 10,000 ոտք բարձրութիւն ունի , այնպիսի ուղղահայեաց դիրքով վերէն վար կտրուած է , որ սառն ու ձիւնը ամենւին չեն կրնար վրան հանգչիլ , և իր կրանիտեայ սեպացեալ ու լեռի կողերը կ'երեւցընէ : Եւս արևմտեան կողմը՝ տեսարանը բոլորովին տարբեր է . ասպռաժը , որ 11,000 ոտք բարձրութեան աւելի է , թեթև զառիվայրով մը վար ինջած է , անանկ որ բոլոր այս երկայնութեանը վրայ կարծես թէ անհատնում գորգ մը պատած է սառնամանեաց ու ձեան , որուն միապաղաղ սպիտակութիւնը աչք կ'առնէ : Կագաթը հիւսիսային արևելեան կողմէն նայելով՝ հասարակ ուղտի կամ տաճիկ ուղտի սապատին կը նմանի . անանկ որ ժողո-



Մոնեդե Պիսուկոյ կամ Սպիտակ Լեռը

Վերջը աստիճանաբար կը կոչէ զայն :

Սպիտակ Լեռան կատարը երկար ատեն անմատչելի համարուեցաւ . շատ անգամ ճանապարհորդք՝ կամ հետքեր բռնութեան , կամ յանդգնական ախորժի և կամ զիտնական վախճանի պատճառաւ փորձեր էին ելլելու վրան . շատ անգամ ալ նմանապէս Համոնեայ առաջնորդները՝ իրենց պատուոյն կամ իրարու նախանձորդութեան եռանդեամբ գագաթը բարձրանալու քայլեր ըրեր էին . բայց ոչ առաջիններն և ոչ ասոնք իրենց մտքի գրածը չէին կրցած յաջողցնել , և ու իցէ կողմէն որ ալ ջանացած էին , ամենէն աւելի յանդգնագոյններն ու բազաւորները հարկաւորուէին ետ գառնալու : Բայնկով աս լեռանս գլխուն վրայ ոտք դնելը

այնպիսի փառք մը կը սեպուէր , զոր անկարելի էր ձեռք ձգելը . մէյ մ' ալ յանկարծակի Համոնեայ առաջնորդ մը՝ Յակոբոս Պալմա անուամբ , դիպուածով այս յաղթանակն ստացաւ : 1786 տարւոյն , երբ բանի մը առաջնորդներ միատեղ այս դժուարին ճամբորդութիւնը կ'ընէին , Պալմա քիչ մը հեռանալով անոնցմէ՝ կորսնցուց զանոնք լեռան վրայ . և գիշերն ու մըրիկ մը վրայ գալով , ստիպուեցաւ ծակ մը բանալու ձեան մէջ , որպէս զի կարենայ անոր մէջ կծկիլ ու երկրորդ օրուան լուսոյն սպասել : Բաւարար , տեսնելով որ մեծ բարձրութեան հասեր է , ուզեց աս պատահարը բանի բերել , և նոր ճամբայ մը գտնել դէպ ի ծագը : Եւ մը ատեն խարխափելով երթալէն ետքը , իր վարժ աչքովը նեղ ճամբայ

մը նշմարեց, որ իրեն կ'երևար թէ գա-
գաթը կը տանէր : Ինչաւ Շամունի,
ու Ռագգար անունով մէկուն իմացուց
այս գաղտնիքը . և որոշեցին որ մէկ-
տեղ ուրիշ անգամ մըն ալ սոյն փորձն
ընեն : Պալմա անտի յուսով խաբուած
չէր . յաղթուեցաւ Սպիտակ Լեռը, և
ինչպէս որ հռոմէական կայսերք իրենց
նուաճած երկիրներուն անունները ի-
րենց տիտղոս կ'առնէին, Պալմա ընդու-
նեցաւ իր նախանձորդներէն նոյն լեռան
պատուանունը : Բայ անականկալ լուրը
մէկէն տարածուելով Օւիցերիոյ ու
Սաւոյայ մէջ, մեծ ուրախութիւն պատ-
ճառեց ամենուն . և անկէ վերջը շա-
տերը Սպիտակ Լեռան գլխէն տարածե-
ցին աչուրնին բնութեան վրայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Միւ : (Տես երես 26)

Ինչ ապագայութեան ունին կենդանեաց
մօին վրայ պարբեր ու անուոր : — Վը-
ժուարին չէ ըմբռնելը թէ կենդանեաց
մօին որպիսութեանը վրայ ինչ ազդե-
ցութիւն կրնայ ունենալ անոնց տարի-
քը : () Երկնակի համար, նորածին կեն-
դանեաց միսը թոյլ կ'ըլլայ, մածու-
ցիկ, եփուելու ատեն տկար ախորժա-
հոտութիւն մը կը բուրէ, ուստի ընդ-
հանրապէս անուտելի կը համարուին :

Բայց երբ այս հասակէն կ'ելլեն ու
դեռ յարբուեն չհասած, շատ կենդա-
նիք փափուկ միս կ'ունենան, առանց
թոյլ ըլլալու, և եփուելու ժամանակ
բարակ ախորժահոտութիւն մը կը բու-
րեն : Եւ երբոր յարբուեն կը հասնին,
ոմանք բոլորովին կը փոխուին, ինչպէս
երբ հորթը եղն կամ երինջ կ'ըլլայ, և
առաջինէն շատ տարբեր է ասոնց մօին
եփուելու ատեն բուրած ախորժահո-
տութիւնը :

Բայ հասակն առնելէն ետեւ, արջա-

ռոց տեսակներէն ոմանց կեանքը մէկ
երկու տարի ալ երկարաձգելով, ար-
դեօք անոնց միսն աւելի համով ու ա-
խորժահամ կ'ըլլայ : Բայ կարեոր
հարցմանս վրայ շատ գիտունք մտածե-
րեն, և մասնաւորապէս մօտ ատեններս
Շըվուէյլ անունով գաղղիացի գիտ-
նականը մեծ լոյս տուաւ : Հաւանական
կ'երևայ թէ կենդանեացմէ ոմանք, ինչ-
պէս եղներն ու կովերը, յարբուեն հաս-
նելէն ետեւ մէկ կամ երկու տարի գիր-
ցնելով, համով միս կ'ունենան, որ ե-
փուելով ախորժահոտութիւն մը կը
բուրեն, և սննդատուութեան ամէն
ազէկ որպիսութիւնները կ'ունենան .
ուրիշ կենդանիները, ինչպէս ոչխարը,
յարբուեն հասնելէն ետեւ մէկ երկու
տարի գիրցնելով, անոնց գործուածոց
մէջ անհամեմատ կերպով առատ պա-
րարտ նիւթեր կը զատուին, որոնք թու-
չական պարարտ թթուներ կը բուլան-
դակեն, որոնցմով մսերնին սաստիկ հոտ
մը կ'ունենայ ու ուտելու անախորժ կ'ըլ-
լայ : Երկազու ու այծու միսն ալ ախոր-
ժահամ է քանի որ ուլ են, բայց այս
հասակս անցընելէն ետեւ դեռ յարբուեն
չհասած մսերնին հոտ մը կ'ունենայ :

Բայ կենդանիք, որոնց միսը կ'ու-
տուի, որչափ հասակնին առնուն՝ այն-
չափ մսերնին իրենց ազէկ յատկութիւն
նին կը կորսնցընեն : Ինչպէս, օրինա-
կի համար, այն եղները որ չորս տա-
րուրէն կը սկսին լծուիլ ու ինչուան
ութը կամ տասը տարի շարունակ կ'աշ-
խատին, շատ դժուարաւ կրնան այն-
պէս գիրնալ որ ուտուելու գան . վասն
զի անոնց մկանսական մսին թելերը կը
պնդանան ու դժուարաւ կ'եփուին, ևս
առաւել ախորժով չեն ուտուիր : Իսկ
կենդանեաց տրուած ուտելիքը անոնց
մսին որպիսութեանը վրայ շատ ազդե-
ցութիւն ունենալուն տարակոյս չկայ,
թէպէտ և ինչուան հիմա եղած փոր-
ձերը բաւական չեն սեպուիր այս ազ-
դեցութիւնը ճիշդ որոշելու :

Բայ հորթերը որ լոկ կովու կաթով
կը սնանին, նոյն իսկ ինչուան չորս ամ-
սուան ալ ըլլան, տեղոյն միս մը կ'ու-